

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՔՅՈՌՈՂԼԻ» ԷՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սամվել Ռամազյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ sramaz@mail.com

Հոդվածը ներկայացվել է 19.09.2022, գրախոսվել է 11.04.2023, ընդունվել է տպագրության 11.04.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.1-148

Ներածություն

«Քյոռոզլի» էպոսը, լինելով XVII դ. ստեղծագործություն, տարածված է եղել ոչ միայն թյուրքական, այլև ամենատարբեր ազգերի շրջանում՝ Տյան-Շանից մինչև Բալկաններ, Կասպից ծովից մինչև Սիբիր: Էպոսի ձևավորումն սկսվել է XVII դ.-ից և մինչև XIX դ. վերջերը ենթարկվել է գեղարվեստական տարաբնույթ մշակումների ու փոփոխությունների՝ դառնալով լեզվական և էթնիկ սահմանների հաղթահարման եզակի օրինակ: Հիմնականում այն ավանդել են ասացողները, իսկ սկսել է գրառվել XIX դ. առաջին կեսից մինչև XX դ. սկիզբը, Կենտրոնական Ասիայում տարածված պատումները՝ առավելապես XX դ. 30-40-ական թթ. և ավելի ուշ: Էպոսի զանազան տարբերակներն ընդունված է բաժանել երկու խմբի՝ արևմտյան և արևելյան:

Արևմտյան խմբում ընդգրկված տարբերակները (թուրքական, ադրբեջանական, հայկական, վրացական, դաղստանյան, քրդական ևն), ըստ հետազոտողների մեծամասնության, հիմնականում հանգում են ատրպատականյան (վաղադրբեջանական)¹ «Քյոռոզլու» էպոսին²: Դրանք, հիմնավորա-

¹ XIX դ. կեսերին գրառումից անմիջապես հետո էպոսը Եվրոպայում ուներ առավելապես իրանական համարում, իսկ ավելի ուշ ադրբեջանական (իմա՝ ատրպատականյան) էր համարվում գրառման տեղավայրի հաշվառմամբ: 1918 թ. Ռուսական կայսրության փլուզումից հետո, «Ադրբեջան» անվամբ կազմավորման ի հայտ գալով, դրան ուղղակիորեն վերագրվել է էթնիկ պատկանելություն: ԽՍՀՄ-ի օրոք հարցն առավելապես կրել է քաղաքականացված բնույթ՝ ելնելով «Հարավային Ադրբեջանի» կեղծ դրույթից, ընդամենը, շրջանառության մեջ է դրվել «հարավադրբեջանական» բացարձակ հակագիտական որակումը: 1980-ական թթ. ուսումնասիրություններում Ա. Խոճկոյի գրառած տարբերակի վերաբերմամբ նախապատվություն է տրվել «վաղադրբեջանական» բնորոշմանը: Ադրբեջանական ԽՍՀ-ում գրառված պատումներից տարբերելու և քաղաքական նկատառումներով առաջացած տեղանվանական շփոթից խուսափելու նպատակով օգտագործել ենք «ատրպատականյան» եզրը:

² ԽՍՀՄ-ի օրոք և հետագա ժամանակահատվածի ուսումնասիրություններում արևմտյան խմբում նշվում են էպոսի մի քանի տարբերակներ ևս՝ արխազական, աջարական, լեզգիական, թաբասարանյան, նոդայական, կումիկյան ևն: Սակայն խիստ հարաբերական է դրանք ևս ազգային տարբերակներ համարելը, քանի որ, օր., վրացական տարբերակի ներքո երբեմն հասկացվում են Վրաստանի թաթարներից, իմա՝ ադրբեջանցիներից գրառված պատումներ, ինչպես նաև այսպես կոչված «թբիլիսյան ձեռագիրը»: Երբեմն զուտ վրացական հորինվածք են ներկայացվում հանրահայտ ընդհանուր սյուժեներն ու մոտիվները (Короглы, Набиев 1996, 240): Թուրք բանասերները վերջերս նշում

պես պահպանելով պատմական իրադարձությունների իրական արձագանքները և շերտերը, սկզբնավորվելով անմիջական պատմական հենքից, համեմատաբար ճշմարտացիորեն են վերարտադրել Փոքր Ասիայում XVI-XVII դդ. տեղի ունեցած իրադարձությունները, այն է՝ ջալալիների (ջելալիների) ապստամբությունները, որոնք շուրջ 20 տարի ցնցել են Օսմանյան կայսրությունը:

Արևմտյան բոլոր տարբերակներում «Քյոռօղլի» մականվամբ հայտնի Ռուշանը³ հանպատրաստից բանաստեղծ-երաժիշտ (աշուղ) է, որը, իր նման վրիժառուների գլուխն անցած, վրեժ է լուծում հորը հանիրավի կուրացրած բռնակալ իշխանավորներից (այստեղից էլ «Քյոռօղլի»⁴ մականունը, իմա՝ «կույրի որդի»), վարում Ռոբին Հուդի կարգի «ազնվաբարո ավազակին» բնորոշ կյանք՝ պատսպարվելով լեռնային Չամլիբել ամրոցում: Վերոհիշյալ խմբի տարբերակները հիմնականում գերծ են առասպելական և հեքիաթախառն գծերից, որն էլ ինքնըստինքյան վկայում է կայուն պատմական հիմքի առկայության մասին:

Արևելյան խմբի տարբերակներում (թուրքմենական, ուզբեկական, տաջիկական, ղազախական, կարակալպական, Բուխարայի արաբների, տորթթաթարական, ույղուրական ևն) արևմտյան խմբին բնորոշ պատմավավերական ատաղձը գրեթե ամբողջությամբ անհետանում է՝ տեղը զիջելով վաղնջական հեքիաթախառն ու նախախլամական տարրերով հավելված զրույցների շարքին և իրանական առասպելաբանությանը⁵: Դրանցում Քյոռօղլին (Գյոռօղլին) արդարության խորհրդանիշ առասպելական Չանդըբիլ երկրի կառավարիչն է (ըստ էության, կելտական-բրիտանական բանահյուսության Արթուր թագավորի կարգի)⁶, պատերազմում է դևերի և վիշապների դեմ, ընկնում ստորգետնյա աշխարհի և դուրս ելնում: Առասպելական-հեքիաթային է անգամ նրա ծնունդը. մանուկ Ռուշանը (Ռովշեն) մոր թաղումից հետո ծնվում է գերեզմանում, որտեղից էլ արևելյան խմբի տարբերակների

են նաև էպոսի աֆղանական, հրեական և չինական տարբերակների մասին, որը ևս պետք է վերապահությամբ ընդունել (օրինակ՝ չինականի դեպքում նկատի է առնվում ույղուրական տարբերակը):

³ «Քյոռօղլին» միակ թուրքական էպոսն է, որում գլխավոր հերոսը կրում է հստակ հնդեվրոպական ծագում ունեցող անուն՝ Ռուշան, պրսկ.՝ «լուսավոր», «պայծառ», Առուշան կամ Ռուշան՝ Ուրմիայի բարբառով գրառված և միակ հրատարակված հայկական տարբերակում, Առշամ՝ Վանա բարբառով գրառված անտիպ տարբերակում (Քյոռ-Օղլի, Ժողովրդական վիպասանություն 1941, 19):

⁴ էպոսի և գլխավոր հերոսի բուն անունը (մականունը) թուրքական ուղիղ ձևով «Քյոռօղլու» է, սակայն վերոհիշյալ բնորոշ է միայն թուրքական տարբերակներին, վերջին շրջանում նույն կերպ է նշվում նաև ադրբեջանական և որոշ եվրոպական հրատարակություններում: Արևելահայության համար առավել ընդունված է եղել «Քյոռօղլի» կամ «Քյորօղլի» ձևը, արևմտահայ հրատարակություններում գերիշխել է թուրքական տարբերակը: 1941 թ. հրատարակված հայկական միակ տարբերակը կրում էր «Քյոռ-Օղլի, Ժողովրդական վիպասանություն» անվանումը: Հիմնականում նույն կերպ է պատմական Քյոռօղլին հիշատակվում Առաքել Դավրիժեցու և XVII-XVIII դդ. հայ մատենագիրների երկերում: Ըստ այդմ, հիմք ենք ընդունել ավանդականության սկզբունքը:

⁵ Միջանկյալ մի օղակ է XX դ. 60-ական թթ. թուրքագետ Լ. Չալիձեի հայտնաբերած և Ատրպատականի թուրքերենով (թուրքի) 28 մեջլիսներից բաղկացած էպոսի տարբերակը, որը պայմանականորեն կոչվում է «թբիլիսյան ձեռագիր»: Խ. Կորոզլու կարծիքով՝ այն գրառվել է XIX դ. երկրորդ կեսին՝ 1856 թ.-ից ոչ շուտ և ավելի մի հին ձեռագրի պատճեն է (Koroglu 1983, 183): Պարսկերենի խիստ ազդեցությունն այս ձեռագրում թույլ է տալիս ենթադրել, որ այն ևս Ատրպատականում է գրառվել:

⁶ Chadwick, Zhirmunsky 2010, 300-301.

յուրահատուկ անվանումները՝ Գյոռօղլի, Գոռօղլի, Գուռօղլի, Գորօզլի, Կուրօղլի, Գուրուզլի կամ Գուրգուլի (բառացի «գերեզմանի որդի»): Որոշ ազգային պատումներում սույն պատմությունը զուգակցվում է հերոսի հոր կուրացման փաստի հետ, ըստ այդմ, առկա են նաև «Քյոռօղլի» (կամ «Քյոռօղլի») անվամբ թուրքմենական, ղազախական և այլ պատումներ⁷: Տաջիկական և թուրքմենական պատումների շարքը հինգ տարբեր անվանում ունի, որոնցից երեքը հանգում են «գերեզմանի որդի» տարբերակին, մեկը՝ «կույրի որդի» («Կուրուլլի»), իսկ մյուսն իր նախադեպը չունեցող՝ յուրօրինակ «խուլի որդի» տարբերակին («Գարավլի»): Ղազախական, կարակալպական, տոբոլ-թաթարական (սիբիրյան թաթարների) տարբերակները, ավելի ուշ ժամանակների ծնունդ լինելով, ծագումնաբանորեն հանգում են ուզբեկական «Գոռօղլուն»։ Տաջիկական «Գուրուզլի» («Գուրգուլի») չափածո էպոսը յուրօրինակ հորինվածքով առանձնանում է արևելյան խմբի տարբերակներից։ Թուրքմենական «Գյոռօղլին», հետազոտողների մի մասի կարծիքով, միջանկյալ օղակ է երկու խմբերի միջև՝ ընդհանուր գծեր ունենալով ինչպես տաջիկական, այնպես էլ ատրպատականյան տարբերակի հետ։

Խոճկոյի հրատարակությունը և ռուսերեն թարգմանությունը

Էպոսի առանձին պատումներ և հատվածներ առաջին անգամ գրավել են Ռուսական կայսրության տարածքում։ Մասնավորապես, հայտնի է ռուսաստանցի հետազոտող Իվան Շոպենի 1830-ական թթ. գրառումը, որը, այնուամենայնիվ, ամբողջական և հավաստի չի համարվում⁸:

Առաջին ամբողջական տարբերակն Իրանի Ատրպատական երկրամասում 1830-ական թթ. գրառել է ռուսաստանցի լեհ արևելագետ Ալեքսանդր Խոճկոն (Խոճկո-Բորեյկո, 1804-1891 թթ.)⁹: Վերջինս, ռուսական դիվանագիտական ծառայության անցնելով, 1830 թ.-ից պաշտոնավարել է Իրանում, մասնավորապես Թավրիզում։ Տեղում թյուրքախոս ասացողից գրառելով նշված տարբերակը՝ Խոճկոն այն 1842 թ. անգլերեն հրատարակել է Լոնդոնում։ Եվրոպայում այն արժանացել է ոչ միայն գիտական, այլև գրական շրջանակների ուշադրությանը. տվյալ թեմայով հայտնի են Ժորժ Սանդի¹⁰ և Հենրի Լոնգֆելլոյի¹¹ ստեղծագործությունները։

Ռուսաստանյան գրական շրջանակների արձագանքներից հայտնի է Իվան Եվլախովի «Շամիլբեյյան հովիտ» վիպակը, որը 1849 թ. հրատարակվել է Թիֆլիսում¹², նմանապես հայտնի են ռուսաստանցի հեղինակների այլ գրական մշակումներ (պոեմ, հեքիաթներ ևն)։ Խոճկոյի գրառման ռուսերեն թարգմանությունը միանգամայն ակնկալելի պետք է լիներ տվյալ

⁷ Жирмунский, Зарифов 1947, 192-197.

⁸ Шопен 1840, 12-25.

⁹ Խոճկոյի արևելագիտական ուսումնասիրությունների մասին՝ Грицкевич 1987, 41-52:

¹⁰ Sand 2018.

¹¹ Longfellow 1931.

¹² Евлахов 1849.

ժամանակահատվածում, սակայն միայն 14 տարի անց, Ս.Ս. Պեննի թարգմանությամբ, այն տպագրվել է Թիֆլիսում լույս տեսնող «Кавказ» քաղաքական-գրական թերթի համարներում (1856 թ. մարտ-մայիս)¹³, իսկ այնուհետև՝ առանձին գրքուկով, սահմանափակ տպաքանակով:

Մինչև Ս. Ս. Պեննի թարգմանությունը հայտնի է նման այլ փորձերի մասին ևս, որոնք հիմնականում գնահատվել են որպես ոչ ամբողջական և բնագրից բավական շեղված: Մասնավորապես, հայտնի են 1842-1845 թթ. ընթացքում Օ.Ի. Սենկովսկու և Ն.Վ. Բերգի թարգմանությունները. ընդամենը, երկու դեպքում էլ ստեղծագործությունն ընկալվել է որպես պարսից գրականության նմուշ՝ գրառման տեղավայրի հաշվառմամբ: Ս. Պեննի՝ 1856 թ. թարգմանությունը համարվել է բնագրին առավել հարազատ և հաջողված, որը, սակայն, մեր ուսումնասիրության արդյունքներով չի համապատասխանում իրականությանը: Շատ դեպքերում թարգմանությունը բավական շեղվել է բովանդակային մանրամասներից, իսկ հայկականության հիշատակությունները տեքստից կամայականորեն իսպառ հեռացվել են: Ստորև դրանք կներկայացվեն համապատասխան համեմատական վերլուծությամբ:

Հայերը և Հայաստանը Խոճկոյի գրառման մեջ և դրա ռուսերեն տարբերակում

Էպոսի առաջին իսկ հրատարակված և հետագա տարբերակներում ի հայտ են եկել հայկական ենթաշերտին առնչվող որոշ առումով անբացատրելի դրվագներ, որոնց հիմնավորմամբ Քյոռոզլին կերպավորվել է որպես հայության նկատմամբ դրական տրամադրված կամ առնվազն քրիստոնյաների պաշտպան: Ընդամենը, էպոսի կենտրոնաասիական որոշ տարբերակներում էլ Քյոռոզլին հաճախ հանդես է գալիս քրիստոնյաների պաշտպան և բարեկամ: Այսպես, Խոճկոյի գրառած տարբերակի VIII գլխում (բնագրում՝ Meeting, ռուսերեն և այլ թարգմանություններում՝ մեջլիս) մի առիթով Քյոռոզլին պատասպարվում է Կարսի մոտ գտնվող հայոց եկեղեցում. շփոթմունքի է մատնվում նրա որդեգիր Այվազը. «*Ի՛նչ սարսափ: Քյոռոզլին այս պահին մի հայկական եկեղեցում է, շրջապատված թուրքերի ամբոխով*» (բնագրում՝ “*What a horror! Kurroglou, at this moment, is in an Armenian church, surrounded by a host of Turks*”)¹⁴: Սույն հատվածը բնագրին համապատասխան չի թարգմանել Ս. Պեննը. Կարսի հայոց եկեղեցու փոխարեն նշվում է մահմեդական մզկիթը (մզկիթի գագաթը). «*-Бда, вскричал он. Кёр-оглу, в эту минуту, находится на вершине мечети и окружен толпою Турок*»¹⁵:

Բնագրում տվյալ միջադեպի շարունակության մեջ Քյոռոզլու նման արարքը կասկած է հարուցում զինակիցների մեջ. «*Արդյո՞ք մի հայ է նա, որ պետք է գնա և աղոթի եկեղեցում*» (“*Is he an Armenian, that he should go to*

¹³ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 21-24, 26-27, 30-34, 36-42, 1856.

¹⁴ Chodzko 1842, 207.

¹⁵ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 36, 10 мая, 1856, 145.

pray in a church?»)¹⁶: Համապատասխան տողը ռուսերեն վերաձևակերպվել է հետևյալ կերպ. «*Разве он шёл, что взобрался на мечеть?*»¹⁷.

XI գլխում Քյոռոզլին մի առիթով երգում ասում է. «*Ես սիրում եմ հայոց խաչը: Չի մեռնի նա, ով այն համբուրում է*» (քնագրում՝ «*I like the Armenian cross. He will not die who kisses it*»)¹⁸: Սույն հատվածը ևս բնագրին համապատասխան չի թարգմանել Ս. Պեննը. այս անգամ հայկականությունը փոխարինվել է ընդհանուր քրիստոնեականով. «*Я почитаю христианский крест. Тот, кто целует его, не умирает*»¹⁹:

Հայությանն առնչվող այլ դրվագներից հայ վաճառականի սպանության և, ըստ էության, թվացյալ հայատյացություն արտահայտող դրվագը, այնուամենայնիվ, տարբեր պատումներում հակասության մեջ է վերոհիշյալի հետ, որն իր հերթին տարբեր կերպ է մեկնաբանվում, ավելին՝ տարբեր կերպ ներկայացվում հետագա հրատարակություններում՝ կախված տվյալ ժամանակահատվածում հայության ընդհանուր ընկալման և գրառողի կամ ասացողի համապատասխան մակարդակից: Ընդհանուր առմամբ, վաճառականի կերպարը և դրա հետ կապված դրվագը կայուն տեղ ունեն «Քյոռոզլի» էպոսի արևմտյան խմբի տարբերակներում, վաճառականին հիմնականում վերագրվում է հայկական ծագում: Միևնույն կերպարն ու բնորոշ դրվագը (Բեգիրգեն) ակնհայտորեն իրենց անդրադարձն են ստացել էպոսի նաև արևելյան խմբի հիմնական տարբերակներում, մանավանդ թուրքմենական պատումներում, որոնցում վաճառականի հայկականությունը փոխարինվել է ընդհանուր կովկասյան ծագմամբ²⁰:

Խոճկոյի գրառած ատրպատականյան, թուրքական և այլ տարբերակներում Քյոռոզլին մի անիմաստ և ստոր սպանության հեղինակ է: Նման զարգացման հիմնական գծերն են. քաջարի վաճառականը կոլվում և մենամարտում հաղթում է տուրք պահանջող Քյոռոզլուն, սակայն խղճահարվելով ողջ առողջ բաց է թողնում, երբ վերջինս արցունքն աչքերին գթություն է հայցում: Ատրպատականյան տարբերակում նույնիսկ դրանից հետո հայն իր վրանն է հրավիրում Քյոռոզլուն, մեծարում և երգեցողության համար 500 թուման²¹ նվիրելով՝ ճանապարհում Չամլիբեյ: Բայց հակառակ այս, հիրավի, ասպետական մեծահոգությանը՝ Քյոռոզլին երկրորդ անգամ ևս դյուցազնին ոչ հարիր է վարվում՝ Էրզրումի ճանապարհին (Երզնկայում) դարանակալ սպա-

¹⁶ Chodzko 1842, 211.

¹⁷ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 36, 146.

¹⁸ Chodzko 1842, 283: Հմմտ. թուրք հետազոտող Փ.Ն. Բորաթավի մոտ՝ «*Severim ben Ermeninin hacini...*» (Boratav 2016, 126):

¹⁹ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 40, 24 мая, 1856, 161: Տվյալ դրվագը Խոճկոն և թարգմանիչը նույն կերպ են մեկնաբանել, իմա՝ ավելի շուտ քրիստոնյա կղառնամ, քան կներեմ զինակից Դեմուրջողյունին (Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 40, 24 мая, 1856, 161, Chodzko 1842, 283):

²⁰ Էպոսում հայ վաճառականի կերպարի մասով առավել մանրամասն՝ Ռամազյան 2018, 205-219:

²¹ Դրամական միավորն իրանական է, այլ ոչ թե օսմանյան, քանի որ տարբերակը գրառվել է Իրանի Ատրպատական երկրամասում:

նելով վաճառականին և յուրացնելով նրա քարավանը²²: Մինչև մենամարտը վաճառականը թուրք է ներկայանում, սակայն սպանությունից հետո, նրա մարմինը մերկացնելով և համոզվելով, որ կարծեցյալ «թուրքը» հայ էր, Քյոռոզլին, գոհ իր արարքից, անգամ երգ է հյուսում:

Խնդրո առարկա հատվածի ծանոթագրության մեջ Խոճկոն հավելյալ բացատրություն է տալիս, թե պարսիկները (իմա՝ շիա մահմեդականները, որոնցից է Քյոռոզլին) քրիստոնյաներից առավել ատում են սուննի թուրքերին և գերադասում հայից խաբված լինել, քան որևէ թուրքից²³: Միևնույն դրվագը ժամանակին քննած Հ. Պերպերյանի մեկնաբանությամբ ևս, «*Քէօռօշլու կը մխիթարուի որ իրմէ գերազանց մարդը ո՛չ թե Սիւննի մըն էր, այլ Հայ մը*»²⁴: «*Քյոռոզլին հաճախ էր անպարիվ կերպով վարվում, - գրում է Խ. Կորոզլին՝ միևնույն դրվագը քննարկելով «Թբիլիսյան ձեռագրից», - սակայն ամեն անգամ ինչ-որ բան ինչ-որ չափով արդարացնում էր թշնամու դեմ նրա գործողությունները: Բայց հայ վաճառականի հետ միջադեպը չունի ոչ մի արդարացում: Պարսիկական չէ, հավանաբար, որ ասացողը, կարծես, մոռացության է մատնում այս փաստը: Հերագայում... նա {Քյոռոզլին} իր սովորությանը հակառակ՝ ոչ մի խոսքով չի ակնարկում վաճառականի հետ իր հանդիպման մասին... Քյոռոզլին վաճառականի հետ ստորաբար է վարվում ոչ թե նրա համար, որ նա հայ է, այլ անհասկանալի ներքին բնազդով*»²⁵:

Ըստ մեր համեմատական քննության արդյունքների՝ Խոճկոյի հրատարակության VII գլուխը Ս. Պեննը բնավ բնագրին համապատասխան չի թարգմանել: Վաճառականի համար նշվում է միայն նրա քրիստոնյա լինելը, հայկական ինքնությունը կրկին անհասկանալիորեն զեղչվել է («*Ho ybumyմ կըպեզ օկազալս չե Կըրկոմ, - օն Բըլ քրիստիանի*»)²⁶, որը, նախորդ նման օրինակները հաշվի առնելով, վստահաբար ունեցել է ակնհայտ միտում: Նմանապես ամբողջությամբ բացակայում է Խոճկոյի՝ վերը նշված ծանուցումը, դրա փոխարեն թարգմանչի հեղինակած հատվածներն են²⁷:

Բացի հայության հետ կապված վերոհիշյալ դրվագներից, Խոճկոյի տարբերակի գործողությունները հիմնականում ընթանում են Հայկական լեռնաշխարհում. ըստ այդմ՝ հիշատակվում են Արևմտյան Հայաստանի և Արևելյան Հայաստանի տեղանունները (Երզնկա, Էրզրում, Կարս ևն): Մասնավորապես, II գլխում Քյոռոզլին ընդհարում է ունենում Երևանի կառավարիչ (սերդար) Հուսեյն-խանի (կամ Հուսեյն-Ալի-խանի) հետ. ընդամին, Երևանը հիշատակվում է տվյալ ժամանակահատվածում առավել գործածական Erivan ձևով («*Hussein-Khan, governor of Erivan*»)²⁸: Հավատարիմ նախորդ վերաձևակեր-

²² Chodzko 1842, 192-194.

²³ Chodzko 1842, 193-194.

²⁴ Պերպերյան 1947, 120:

²⁵ Короглы 1983, 243.

²⁶ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 34, 3 мая, 1856, 138.

²⁷ Кёр-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 34, 3 мая, 1856, 138.

²⁸ Chodzko 1842, 37.

պումների ոգուն՝ Ս. Պեննը Երևանի մասին հիշատակությունը առանց հարազատության զացմունքի է փոխանցել («Гусейн-Хан, эриванский сердар»)²⁹:

Հարկ է նշել, որ հայկական շրջանակներից Խոճկոյի հրատարակությանը ժամանակին անդրադարձել են, օրինակ, հայտնի բանասեր Քաջբերունին (Գաբրիել Տեր-Հովհաննիսյանց)³⁰ և Հովհաննես Թումանյանը³¹, սակայն ակնհայտորեն Թիֆլիսում հրատարակված ռուսերեն տարբերակով: Թերևս միակ բացառությունը ֆրանսահայ արևելագետ Հայկ Պերպերյանն է, որը 1938 թ. Փարիզում հրատարակված «Արշակ Բ եւ Քեոռոլու» իր աշխատության մեջ Խոճկոյի անգլերեն հրատարակությունից որոշ մեջբերում է արել՝ մասնավորապես, հայ վաճառականի և Քյոռոլու մենամարտի դրվագի մասով³²:

Փաստորեն, մեր ուսումնասիրության արդյունքներով, հակառակ Ա. Խոճկոյի հրատարակության նշված հատվածների, հայության հետ կապված եզակի հիշատակություններն իսպառ բացակայում են Ս. Պեննի 1856 թ. ռուսերեն թարգմանության մեջ: Ընդամին, երկու դեպքում դրանք կամայականորեն փոխարինվել են ընդհանուր քրիստոնեական բնույթով, մյուս երկու դեպքում՝ մահմեդական:

Թերևս առավել աղաղակող օրինակը վաճառականի դրվագից վերջինիս հայկական ինքնության փոխարինումն է քրիստոնեականով: Եթե տվյալ դեպքում կարելի է մտածել, թե կայսերական գրաքննությունն է փորձել մեղմել թյուրք-մահմեդականի կողմից հայի սպանության դրվագը՝ Կովկասում ազգամիջյան հարաբերությունները չլարելու տեսակետից, ապա, մյուս դեպքերը հաշվի առնելով, ակնհայտ է թարգմանչի կամ խմբագրի դրսևորած կանխակալ մոտեցումը, որի հիմքերի և դրդապատճառների մասին հստակ տեղեկատվություն չկա: Ի վերջո, 1846 թ. Կովկասի փոխարքայի նախաձեռնությամբ հիմնված «Кавказ» քաղաքական-գրական թերթը սկզբից ևեթ հրատարակվել է որոշ վերահսկողությամբ, իսկ 1850-ից այն արդեն ամբողջությամբ վերահսկում և գրաքննում էր փոխարքայի կառավարման գրասենյակը³³: Ըստ երևույթին, հենց նման պայմաններում էլ Խոճկոյի հրատարակությունը ռուսերեն թարգմանությունից հետո խմբագրվել և գրկվել է մեզ հետաքրքրող տեղեկատվությունից:

Եզրակացություններ

Այսպիսով, ակնհայտ է, որ Ս. Պեննի ռուսերեն թարգմանությունն Ա. Խոճկոյի սկզբնաղբյուր տեքստի ճշգրիտ պատկերը ոչ միայն չի արտացոլում, այլև կրել է իմաստի և ձևի, ինչպես նաև հայկականության հետ

²⁹ Кёп-Оглу, восточный поэт-наездник. «Кавказ» N 22, 15 марта, 1856, 88.

³⁰ Քաջբերունի 1877/78, 327:

³¹ Թումանյան 1994, 215-216:

³² Պերպերյան 1938, 25:

³³ Ավելի ուշ՝ 1897-1899 թթ., «Кавказ»-ը տխրահռչակ Վասիլի Վելիչկոյի խմբագրությամբ դարձել էր հայատյացության գլխավոր խոսափողը Կովկասում և Ռուսական կայսրությունում:

առնչվող տեղեկատվության կորուստներ: Ըստ այդմ, հետագա գիտական ուսումնասիրությունների համար այն այլևս չի կարող դիտարկվել առնվազն որպես սկզբնաղբյուր:

Ինչպես հայկական, այնպես էլ Ռուսական կայսրության և ԽՍՀՄ-ի գիտական-գրական շրջանակների համար նման հակագիտական մոտեցումը միանգամայն աննկատ է մնացել, քանի որ ռուսերեն թարգմանված տարբերակը, բնականաբար, առավել հասանելի է եղել և հիմք դարձել հետագա ուսումնասիրությունների համար:

Հայերի և Հայաստանի մասին վերոհիշյալ հիշատակությունները նոր հիմք կարող են դառնալ «Քյոռօղլի» էպոսում դրսևորվող հայկական ենթաշերտի հավելյալ ուսումնասիրության համար, որն ակնհայտորեն առկա է էպոսի առաջին իսկ ամբողջական գրառման մեջ:

Գրականություն

- Թումանյան Հ. 1994, Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн. XII, СПб., 1910, Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, Ջրբաշյան Է.Ս. (գլխ. խմբ.), հ. 6-րդ (Քննադատություն և հրապարակախոսություն 1887-1912), Երևան, «Գիտություն», էջ 215-216:
- Պէրպէրեան Հ. 1938, Արշակ Բ. եւ Քեօռօղլու, Փարիզ, «Գեղ. Տպարան Խ. Մաթիկեան» (Արտատպուած «Ապագայ» շաբաթաթերթէն սրբագրութիւններով եւ յաւելումներով), 44 էջ:
- Պէրպէրեան Հ. 1947, Նոր փոփոխակ մը Քեօռօղլուի դիցազնավէպին մէկ դրուագին, Իսթանպուլ, Ընդարձակ տարեգիրք Ս.Փ.Ա. Հիւանդանոցի, «Տպագրութիւն Յ. Ազարեան», էջ 116-124:
- Ռամազյան Ս. 2018, Վաճառականի կերպարը «Քյոռօղլի» էպոսում և դրա պատմականության հիմքերը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 2, Երևան, էջ 205-219:
- Քաջբերունի 1877/78, Ճանապարհորդական նկատողութիւնք, «Փորձ» հանդէս, թիւ IV, II տարի, Տիֆլիս, «Տպարան Ա. Էնֆիաջեանցի», էջ 321-368:
- Քյոռ-Օղլի, ժողովրդական վիպասանություն 1941, հավաքեց և գրի առավ Գ. Թարվերդյան, առաջաբանը՝ Խ. Սամուելյանի, Երևան, «ԱրմՖԱՆ», 235 էջ:
- Грицкевич В.П. 1987, Александр Ходзько (1804-1891) и его вклад в развитие иранистики и тюркологии, Ольдерогге Д.А. (ред.), Страны и народы Востока. Выпуск XXV (География. Этнография. История), Москва, «Наука», с. 41-52.
- Евлахов И.И. 1849, Шамлибельская долина. Повесть. Тифлис, «Закавказский вестник» N 22, 23, 27 (отд. изд.- Тифлис).
- Жирмунский В.М., Зарифов Х.Т. 1947, Узбекский народный героический эпос, Москва, ОГИЗ, «Госхудлитиздат», 530 с.
- Кёр-Оглу, восточный поэт-наездник. Полное собрание его импровизаций с присовокуплением его биографии 1856, перевод с английского С.С. Пенна. Тифлис, «Кавказ» N 21-24, 26-27, 30-34, 36-42. Типография канцелярии наместника на Кавказе.
- Короглы Х.Г. 1983, Взаимосвязи эпоса народов Средней Азии, Ирана и Азербайджана, Москва, «Наука», 336 с.
- Короглы Х.Г., Набиев А.М. 1996, Азербайджанский героический эпос, Баку, «Язычы», 307 с.
- Шопен И.И. 1840, Кер-оглу. Татарская легенда: Маяк современного просвещения и образованности. Труды ученых и литераторов, русских и иностранных, ч. I-II, СПб., с. 127-182.

- Chadwick N., Zhirmunsky V. 2010, Oral Epics of Central Asia, New York, Reissue Edition, Cambridge University Press, 376 p.
- Chodzko A. 1842, Popular Poetry of Persia as Found in the Adventures and Improvisations of Kurroglou, the Bandit-Minstrel of Northern Persia, and in the Songs of the People Inhabiting the Stories of the Caspian Sea, London, Harrison and Co., Printers, St. Martin's Lane, X+592 p.
- Longfellow H. 1931, The Leap of Roushan Beg, Ed. By Arthur Christy, New York, William Edwin Rudge, 68 p.
- Sand G. 2018, Le meunier d'Angibault; Kourroglou, épopée persane, Tome 1, Éd. 1845, Paris, Hachette Livre-BNF, 362 p.
- Boratav P.N. 2016, Koroğlu Destanı, Ankara, Bütün Eserleri - 6, BilgeSu, 358 s.

ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ «ՔՅՈՈՂԼԻ» ԷՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սամվել Ռամազյան

Ամփոփում

«Քյոռողլի» էպոսի առաջին ամբողջական գրառումը XIX դ. առաջին կեսին կատարել է ռուսաստանցի արևելագետ Ա. Խոճկոն իրանական Ադրբեջան (Ատրպատական) նահանգում: Գրառումն անգլերենով հրատարակվել է 1842 թ. Լոնդոնում, իսկ 1856 թ.՝ ռուսերեն թիֆլիսում (Ս. Պեննի թարգմանությամբ):

Մեր ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ հակառակ Խոճկոյի հրատարակության մեջ հայերի և Հայաստանի վերաբերյալ եզակի հիշատակությունների առկայության, տվյալ հատվածներն իսպառ բացակայում են ռուսերեն թարգմանության մեջ: Ընդ որում, երկու դեպքում դրանք կամայականորեն փոխարինվել են ընդհանուր քրիստոնեական բնույթով, մյուս երկու դեպքում՝ մահմեդական: Նման հակագիտական մոտեցումը միանգամայն աննկատ է մնացել Ռուսական կայսրության և ԽՍՀՄ-ի գիտական-գրական շրջանակների համար, քանի որ ռուսերեն թարգմանված տարբերակն առավել հասանելի է եղել՝ հիմք դառնալով հետագա ուսումնասիրությունների համար:

Բանալի բառեր՝ «Քյոռողլի», էպոս, Ա. Խոճկո, Ս. Պենն, թարգմանություն, վաճառական, «Кавказ»:

АРМЯНЕ И АРМЕНИЯ В ПЕРВОМ ИЗДАНИИ И РУССКОМ ПЕРЕВОДЕ ЭПОСА «КЕРОГЛЫ»

Самвел Рамазян

Резюме

Первая полная запись эпоса «Кероглы» была сделана в первой половине XIX в., в иранской провинции Азербайджан (Атурпатакан), российским востоковедом А. Ходзько. Запись была опубликована в 1842 г. на английском языке в Лондоне, а в 1856 г. – на русском языке в Тифлисе (перевод С. Пенна).

Согласно результатам нашего исследования, вопреки наличию уникальных упоминаний об армянах и Армении, в издании Ходзько данные разделы в русском переводе отсутствуют. Между тем в двух случаях они были произвольно заменены текстом общехристианского содержания, а в двух других – мусульманского. Такой антинаучный подход остался совершенно незамеченным научно-литературными кругами Российской империи и СССР, поскольку русскоязычный вариант был более доступен и служил базой для дальнейших исследований.

Ключевые слова – «Кероглы», эпос, А. Ходзько, С. Пенн, перевод, купец, «Кавказ».

ARMENIANS AND ARMENIA IN THE FIRST EDITION AND RUSSIAN TRANSLATION OF THE EPIC "KOROGLU"

Samvel Ramazyan

Abstract

The first full recording of the epic "Koroglu" was made in the first half of the 19th century, in the Iranian province of Azerbaijan (Aturpatakan), by the Russian orientalist A. Chodzko. It was published in 1842 in English (London), and in 1856 in Russian (Tiflis), translated by S. Penn.

According to the results of our research, despite the presence of unique references to Armenians and Armenia in Chodzko's edition, these sections are completely absent in the Russian translation. Meanwhile, in two cases they were arbitrarily replaced by a general Christian character, in two other cases by a Muslim one. Such an anti-scientific approach went completely unnoticed by scientific and literary circles in the Russian Empire and the USSR, since the Russian-language version was more accessible and served as the basis for further research.

Key words – "Koroglu", Epic, A. Chodzko, S. Penn, translation, merchant, "Caucasus".